Հայաստան, ք. Երևան 0010, Տիգրան Մեծի 4
4 Tigran Mets str., Yerevan 0010, Armenia
+374 60 464501, 464502
Info@ekeng.am
www.ekeng.am

Հաճախորդների սպասարկման համակարգում գրանցման ուղեցույց

Տարբերակ 1.5

Էլեկտրոնային Կառավարման Ենթակառուցվածքների Ներդրման Գրասենյակ ՓԲԸ

e-Governance Infrastructure Implementation Unit CJSC

Բովանդակություն

Ներածություն _____ 3

PIN կոդի ակտիվացումը _____ 4

Հաճախորդների սպասարկման համակարգ և գրանցման քայլեր _____ 6

Տարեկան օնլայն սպասարկման վճարում _____ 8

Օնլայն վճարում և գրանցում _____ 10

Սպասարկման համակարգի խնդիրների կարգավորումը Mozilla Firefox բրաուզերում _____ 12

Ներածություն

Սույն ձեռնարկը նկարագրում է նույնականացման քարտի էլեկտրոնային ստորագրության ակտիվացումը սպասարկման համակարգում և նույնականացման քարտի էլ.ստորագրության տարեկան սպասարկման վճարի կատարման եղանակները:

PIN կոդի ակտիվացումը

- Նույնականացման քարտի առաջին իսկ օգտագործման ժամանակ անհրաժեշտ է ակտիվացնել PIN կոդը:

PIN կոդը ակտիվացնելու համար անհրաժեշտ է միացնել Card Reader սարքը, տեղադրել նույնականացման քարտը, բացել CryptoCard Suite Manager ծրագիրը, նշել ***ARMID (AuthPIN)*** և սեղմել ***Activate*** կոճակը:



- Բացված պատուհանում անհրաժեշտ է մուտքագրել ***PUK*** կոդը՝ ***Initial PUK*** դաշտում, Ձեր ***PIN*** կոդը, ***New PIN*** դաշտում և հաստատել՝ կրկին մուտքագրելով ***confirm*** դաշտում:



- Գործողությունները հաջողությամբ ավարտելուց հետո բացված պատուհանում անհրաժեշտ է սեղմել ***OK***:

Նույն քայլերը կատարել նաև ***ARMID (SignPin)*** տողի համար:

Նույնականացման քարտի PIN կոդի ակտիվացումը կատարելուց հետո անհրաժեշտ է քարտը հանել կարդացող սարքից, այնուհետև կրկին տեղադրել:



- Նույնականացման քարտը համակարգչին միացնելուց հետո աշխատանքային սեղանի աջ անկյունում հայտնվում է հետևյալ հաղորդագրությունը, համաձայն որի նույնականացման քարտի հավաստագիրն առկա է համակարգչում:

Հաճախորդների սպասարկման համակարգ և գրանցման քայլեր

Հաճախորդների սպասարկման համակարգում գրանցվելու համար անհրաժեշտ է նախ ակտիվացնել նույնականացման քարտի PIN կոդը, այնուհետև միանալ https://crm.ekeng.am/ հղմանը (ցանկալի է Google chrome բրաուզերով):

- Սեղմելով ***https://crm.ekeng.am/*** հղման վրա՝ բացվում է հետևյալ պատուհանը: Անհրաժեշտ է ընդունել ստորագրող անձի հավաստագիրը՝ (անուն,ազգանունը անգլերեն տառերով և ՀԾՀ) սեղմելով ***OK***:



- Այնուհետև անհրաժեշտ է մուտքագրել ***PIN*** կոդը Cryptotech CSP պատուհանում և սեղմել ***OK***:

PIN կոդի մուտքագրումից հետո բացված պատուհանում անհրաժեշտ է սեղմել ***Գրանցվել***:

- Վճարման բարեհաջող կատարման դեպքում բացված պատուհանում անհրաժեշտ է մուտքագրել բջջային հեռախոսահամար և սեղմել ***Մուտք***:

- Հաջորդող պատուհանում անհրաժեշտ է համոզվել, որ տվյալները ճիշտ են և համաձայնել պայմանագրի պայմանների հետ:

- Մուտքագրված բջջային հեռախոսին կստանաք հաստատման կոդ պարունակող ***sms*** կարճ հաղորդագրություն, որն անհրաժեշտ է մուտքագրել Կոդը տողում և սեղմել «***Ակտիվացնել սերտիֆիկատը***»: Եթե կարճ հաղորդագրություն չի ստացվել, ապա անհրաժեշտ է սեղմել «Կրկին ուղարկել ՍՄՍ»:





- Քայլերի բարեհաջող կատարման դեպքում կստանաք ևս մեկ հաղորդագրություն, որը կհաստատի գրանցումը:



Ուշադրություն. **Նույնականացման քարտի էլ.ստորագրության ակտիվացումն այլ համակարգերում կատարվում է ակտիվացումից 3-5 ժամ անց:**

Տարեկան օնլայն սպասարկման վճարում

Էլեկտրոնային ստորագրության տարեկան պասարկման վճարը օնլայն կատարելու համար անհրաժեշտ է նախապես տեղադրել ստորագրող անձի նույնականացման քարտը և միանալ ***www.ekeng.am -> Էլ. Ստորագրություն->ինչպես վճարել***՝ https://ekeng.am/hy/howtopay/ էջին:

- Բացված պատուհանում անհրաժեշտ է սեղմել ***Վճարել:***



- Անհրաժեշտ է ընտրել վճարման տարբերակը՝ ***MasterCard, ArCa*** կամ ***Visa*** և սեղմել ***Վճարել:***



- Այնուհետև անհրաժեշտ է մուտքագրել բանկային քարտի համարը, վճարողի անունը, ընտրել քարտի գործողության վերջնաժամկետը և մուտքագրել ***CVC2*** կոդը:



- Այնուհետև բացվում է հաստատման պատուհանը, որտեղ տվյալ քաղվածքը տպելու համար անհրաժեշտ է սեղմել ***Տպել:***

Տվյալ վճարումը ԷԿԵՆԳ ՓԲԸ-ի հաշվեհամարին փոխանցվում է անմիջապես:

Օնլայն վճարում և գրանցում

- Նույնականացման քարտի էլեկտրոնային ստորագրության տարեկան սպասարկման վճարման կատարումը և գրանցումը 1 քայլով կատարելու համար անհրաժեշտ է սեղմել ***“Գրանցվել և վճարել օնլայն”*** կոճակի վրա:



- Բացված պատուհանում անհրաժեշտ է մուտքագրել բջջային հեռախոսահամարը, նշել ***“Բեռնելով էլեկտրոնային ստորագրության….”*** հատվածը և սեղմել ***Պահպանել***:



- Մուտքագրված բջջային հեռախոսահամարին ստացվում է քառանիշ կոդ, որն անհրաժեշտ է մուտքագրել Կոդ դաշտում, որից հետո սեղմել ***“Ստուգել և անցնել օնլայն վճարման”***:



- Բացված պատուհանում սեղմել ***Վճարել***:



- Ընտրել վճարման տարբերակը՝ ***Վիրտուալ ԱրՔա***, ***Վիզա, Մաստեր*** կամ ***ԱրՔա*** և սեղմել Վճարել:



- Բացված պատուհանում անհրաժեշտ է մուտքագրել քարտի համարը, անունը (քարտի վրա գրված հաջորդականությամբ և լեզվով), ընտրել քարտի գործողության վերջնաժամկետը և քարտի հակառակ կողմում առկա ***CVC2*** եռանիշ կոդը:



- Վճարումն ավարտելուց հետո սեղմել ***Տպել*** և ավարտել վճարման գործողությունը:



- ”Գրանցվել և վճարել օնլայն” տարբերակով վճարում կատարելու դեպքում կրկին գրանցվելու անհրաժեշտություն չկա և ծառայության ժամկետը երկարաձգվում է ավտոմատ կերպով:



Սպասարկման համակարգի խնդիրների կարգավորումը Mozilla Firefox բրաուզերում

- Եթե *https://crm.ekeng.am/* հղումը չի աշխատում ***Mozilla Firefox*** բրաուզերում, ապա անհրաժեշտ է բացել ***Firefox*** մենյուն և սեղմել ***Options***:



- Նշել ***Advanced***, ընտրել ***Certificates*** և սեղմել ***Security Devices***:



- Նշել ***Genereic Crypto Services*** և սեղմել ***Load***



- Սեղմել ***Browse***



- Ընտրել *C:\Program Files\CryptoTech\CryptoCard* և ընտրել *CCPkiP11.dll* ֆայլը և սեղմել *Open*:

Սեղմել *OK, OK* :

Քայլերը կատարելուց հետո անհրաժեշտ է կրկին մուտքագրել *https://crm.ekeng.am/* հղումը:



- Բացված պատուհանում մուտքագրել *ARMID (SignPIN) PIN* կոդը, սեղմել *OK*:

Այնուհետև կրկին մուտքագրել *ARMID (AuthPIN) PIN* կոդը, սեղմել *OK*:



- Նշել *Remember this decision* և սեղմել *OK*, որից հետո կբացվի տվյալ հղումը: